ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳ նախարարի՝ 2025 թվականի հուլիսի 21-22-ը Վրաստան այցի վերաբերյալ

1.	Անունը, ազգանունը.	Արփինե Սարգսյան
2.	Զբաղեցրած պաշտոնը.	ՀՀ ներքին գործերի նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետները	Հուլիսի 21-ից 22-ը, Վրաստանի Թբիլիսի քաղաք
4.	Հրավիրող կողմը.	Աշխատանքային այց
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).	ՀՀ և Վրաստանի ներքին գործերի նախարարությունների հարաբերությունների զարգացման հետագա ընթացքը քննարկելու նպատակով:
6.	Քննարկված թեմաները	Երկու երկրների ՆԳ նախարարությունների գործունեության ոլորտին վերաբերող մի շարք ուղղությունների քննարկում:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.	- Հուլիսի 21-ին հանդիպում եմ ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունները, ինչպես նաև երկու հարևան պետությունների իրավապահ մարմինների սերտ ու արդյունավետ համագործակցությունը: Ընդգծվել է Հարավային Կովկասում կայուն խաղաղության բացառիկ կարևորությունը: Այս համատեքստում Վրաստանի վարչապետը դրական գնահատեց Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև խաղաղության համաձայնագրի

		տեքստի շուրջ բանակցությունների ավարտը և հույս հայտնեց, որ փաստաթուղթը մոտ ապագայում կստորագրվի։ Իրակլի Կոբախիձեն վերահաստատեց Վրաստանի կառավարության պատրաստակամությունը՝ ապագայում ևս նպաստելու երկխոսությանը և տարածաշրջանում խաղաղության ու կայունության ապահովմանը։ Հանդիպմանը ներկա էին նաև Վրաստանի ՆԳ նախարար Գելա Գելաձեն և Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը։ - Հուլիսի 21-ին հանդիպում եմ ունեցել Վրաստանի Ներքին գործերի նախարար Գելա Գելաձեի հետ։ Վրաստանի ՆԳ նախարարի խոսքով՝ իրավապահ երկու համակարգերի միջև ձևավորված օպերատիվ կապն անդրազգային հանցավորության դեմ առավել արդյունավետ պայքարի կարևորագույն գործիք է։ Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, ընդգծեցի, որ երկու պետությունները ոչ միայն կիսում են պետական սահմանն, այլև ունեն դարավոր բարեկամություն, մշակութային ու ռազմավարական ամուր կապեր՝ հիմնված երկու ժողովուրդների միջև առկա փոխադարձ հարգանքի վրա։ - հուլիսի 21-ին այցելել եմ Վրաստանի ՆԳՆ «112» հանրային անվտանգության կառավարման կենտրոն։ Վրաստանի ՆԳ փոխնախարարներ Գիորգի Բութխուզիի և Ալեքսանդրե Դարախվելիձեի ուղեկցությամբ շրջել եմ կենտրոնում։ Կենտրոնի տնօրեն Գիորգի Արսոշվիլին մանրամասն ծանոթացրել է կենտրոնի հիմնական

		գործառույթներին, ենթակառուցվածքներին, ներկայացրել է ճգնաժամային իրավիճակներում իրականացվող գործողությունները: Ներկայացվել է նաև ճանապարհային երթևեկության տեսալուսանկարահանման ու ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով կիրառվող էլեկտրոնային մոնիթորինգի համակարգերի աշխատանքը: - Հուլիսի 21-ին այցելել եմ նաև Վրաստանի ՆԳ նախարարության ակադեմիա: Վրաստանի ՆԳ նախարարի տեղակալ Շալվա Թադումաձեն և ակադեմիայի ռեկտոր Լելա Չիկովանին ներկայացրել են ուսումնապրոցեսի մանրամասները: Այցի ընթացքում հետևել եմ դասախոսություններին և ցուցադրական պարապմունքներին: Այցի ընթացքում քննարկվել են երկու երկրների ՆԳ նախարարությունների կրթական հաստատությունների միջև փոխգործակցության զարգացման ու համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտներում երկկողմ համագործակցության ընդլայնման ու փորձի փոխանակման հնարավորությունները: - Հունիսի 22-ին այցելել եմ Վրաստանի Արդարադատության նախարարության Հանրային ծառայությունների կենտրոն: Տնօրեն Վախթանգ Ժվանիան ներկայացրեց պետական ծառայությունների մատուցման վրացական մոդելը: Ծանոթացել եմ նորարարական ծրագրերին և

		տեխնոլոգիական լուծումներին, ինչպես նաև շարժական ծառայություններին, ինչը հասանելի է երկրի ողջ տարածքում՝ 125 մասնաճյուղերի միջոցով։ - Հունիսի 22-ին այցելել եմ պարեկային ոստիկանության վարչություն, ծանոթացել իրականացված բարեփոխումներին և ապագա ծրագրերին։ Փոխնախարար Դարախվելիձեն և վարչության ղեկավար Լևան Մայսուրաձեն տեղում ներկայացրեցին ծառայության հիմնական գործառույթները, ծանոթացրել ավտոպարկին ու Միասնական սպասարկման կենտրոնին, որտեղ քաղաքացիներին ծառայությունները մատուցվում են «մեկ պատուհանի» սկզբունքով։ Վրաստանի ՆԳՆ ծառայությունների գործակալությունում՝ ծանոթացել եմ տրանսպորտային միջոցների հաշվառման ու համարանիշների թողարկման գործընթացներին, ինչպես նաև վարորդական իրավունքի տեսական ու գործնական քննությունների անցկացման կարգին։
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները , ստորագրված փաստաթղթերը.	Այցի ընթացքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին Համաձայնագիր։
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները,	Կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը զարգացնելու գործընկերությունը համատեղ ծրագրերի մշակման և կարողությունների զարգացման

	ակնկալվող արդյունքները.	ուղղություններով:

7/25/2025

Հարգանքով՝

X

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Արփինե Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ՆԳՆ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 15.07.2025թ. թիվ 629-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

   ՀՀ ՆԳ նախարար Արփինե Սարգսյան
4. Գործուղման վայրը **Վրաստան ք. Թբիլիսի**
5. Գործուղման ժամկետը 21.07.2025թ-22.07.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
(ճանապարհածախս,օրապահիկ, գիշերավարձ,)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն (**հաշվարկը կատարված է ԿԲ 15.07.2025թ-ի կուրսով՝ 1$=384.12դր.)**

Ծախսի տեսակը		Արփինե Սարգսյան	Ընդամենը դրամ
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	բիզնես դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**197056**	**197056**
Գիշերա վարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	57$	
	Վճարը 1 օրվա համար (դրամ).	21894.84	
	Օրերի քանակը	1	
	ընդամենը (դրամ)	**21894.84**	**21894.84**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	74$	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28424.88	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	**56849.76**	**56849.76**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (ապահովագրություն)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**275801**	**275801**

ՀՀ ՆԳՆ